Ը.

Ահա՛ Պաշտօնագիր մը, զոր կ'ուղղէ Խաչատուր Էրզրումեցի լուսամիտ և աստուածաբան վարդապետը, իբր Առաքելական Քարոզիչ, Ալիկոռնայի Հայ ժողովրդին, անոնց հիւրասիրութեան ու մասնաւոր խնամքին յանձնարարելով իր մեծանուն բարեկամին Մխիթարայ աշակերտ Հ. Մանուէլը (Խուպիարեան Կ. Պոլսեցի), որ բժշկին խորհրդով և հրամանաւ մեծաւորին հոն կ'առաքուի՝ վերագտնելու համար իր առողջութիւնը։

Յիսուսի Քրիստոսի Ցառայ ի Տէր Խաչատուր Վարդապետէս հասցէ Յիսուսաւանդ ողջոյն, և բազմազան օրհնութիւն ի վերայ մերազնեաց ի յԱլիկուռնա քաղաքի եղելոց Քրիստոսասէր հաւատացելոց։ Ցանուցումն լիցի սիրելեացդ իմոց ի Տէր, զի փրկիչն մեր ասէ ի սրբում Աւետարանի. Ցայսմ գիտասցեն ամենեքեան եթէ իմ աշակերտք էք, եթէ սիրիցէք զմիմեանս։ Ապա ուրեմն որք սիրեն զեղբայր վասն սիրոյն Քրիստոսի, նոքա աշակերտք են Քրիստոսի և որդիք արքայութեան։ Սիրելն է առնել զգործս սիրոյ։ Մինն ի գործոց սիրոյ է, ժողովել զօտարս և ընդունիլ զհիւրս։ Ցանուցումն լիցի բարեպաշտասիրութեան ձերում, զի այս թղթաբեր Տէր Մանուէլս է մինն ի պատուագունից Աբեղայից Մխիթարայ Աստուածաբան Վարդապետի Սեբաստացւոյ, որ վասն իւրոյ մեծի գերազանցութեան, է պարծանք ազգիս մերոյ։ Այս Տէր Էմանուէլ Աբեղայս անկեալ է ի խօթութիւն, առ որոյ փարատումն հարկաւոր համարեցաւ փոփոխումն օդոյ ի բժշկաց։ Ուստի մեծաւոր սորին յիշեցեալ Մխիթար Աստուածաբան բաբունի Վարդապետն ի խորհրդոյ բժշկաց առ փոփոխումն օդոյ, հարկադրեցաւ զյիշեցեալ Տէր Մանուէլ Աբեղայն առաքել այդր առ ստացումն ապաքինութեան։ Աղերսանօք հայցեմ ի բարեպաշտութենէ ձերմէ, զի յիշեցեալ Տէր Մանուէլի Աբեղայի, յայնմիկ, յորում կարօտանայցէ օգնականութեան ձերում, շարժեցեալք ի սիրոյ յօժարաբար ի թիկունս հասանիցիք, որպէս վայելէ բարեպաշտութեան ձերում, զմեծամեծ վարձս ի Քրիստոսէ Աստուծոյ մերմէ ընդունելոցք։ Արդ յանձն արարեալ զձեզ Աստուծոյ և չնորհի նորին, և զիս աստուածընկալ և աստուածահաճոյ աղօթից ձերոց, մնամ

Աստուածահաճոյ բարեպաշտասիրութեան ձերոյ.

Ի Վենետիկ
1717 սեպտեմբերի 22

Պատրաստական յամենայնի
Խաչատուր Վարդապետ Էրզրումեցի
Առաքելական Միսսօնար առ Հայս

Թ.

Բարդուղիմէոս վարդապետ այս առաջին նամակով կը սկսի թղթակցութեան մտնել Մխիթարայ հետ։ Աւելի կը հրատարակենք զայս՝ գրութեան ձևին համար՝ որ եզականութիւն մ'ունի։